

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2012 թվականի

սեպտեմբերի 19-ին

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2007 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-88 օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածում՝

1) 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

2) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

« 9) աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. ».

3) 10-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

4) 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

« 12) ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն: »:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4) զբոսաշրջության և պատմական միջավայրի պահպանության պետական վարչություն. »:

Հոդված 3. Սույն օրենքից բխող այլ իրավական ակտերը ենթակա են ընդունման օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

22 սեպտեմբերի 2012թ.

ք.Ստեփանակերտ

ՀՕ-20-Ն